


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ հմր. 8 Մճ.
Գաւառաց 10 Մճ.
Վեցամսեյ և Պոլսոյ 4 Մճ.
Գաւառաց 5 Մճ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սահմանափակ չկը-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս դադար լրացող ճանաչու-
ած արքայ խորագրութեան վրայ է :
Լրացող լրացող քաղաքեւ ճանաչու-
ած արքայ խորագրութեան վրայ է :
Տնարկին պիտի ուղղուի , զաւա-
թիս Ստանդարտը ճանաչուած թիւ
198 , Նորո խան , Մասիսի գրասեն-
եակը :
Ճանաչուած արքայ խորագրութեան ճա-
նաչուած լրացող լրացող :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 21 ՅՈՒՆՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. Դրան և Օսմ. պատուիրակաց
մէջ հեռագրական հաղորդակցու-
թիւնները դժուարացած ըլլալով խա-
ղաղական բանակցութիւնը խիստ յա-
մար կընթանային : Զորքաւորութի
Պրիւսիական յունար 12/24 թուա-
կանաւ հեռագրի մ'եկաւ, որով Սեր-
վէր և Նամիզ փաշաները կը հար-
ցնէին Բ. Դրան թէ Ռուսաց հաշ-
տուութեան պայմանները ծանուցանող
իրենց հեռագրին պատասխանն ին-
չու չէին ստացած, և կը խնդրէին
որ յիշեալ պայմանաց վրայ հիմնեալ
հաշտութիւն մը ձեռք բերելու հա-
մար լիազոր իշխանութիւն տրուի ի-
րենց : Սպարապետին բանակի օգնա-
կաններէն իզգէթ պէյ անցեալ ուր-
բաթ իրիկուն (յունար 6/18 ին) մայ-
րաքաղաքէս մեկնած էր լիազոր իշ-
խանութիւն տանելով պատուիրակաց,
բայց տակաւին յունար 12/24 ին
Պրիւսիական հասած չէր : Կերեւի որ
իզգէթ պէյ յունար 14/26 ին կըր-
ցեր է հասնիլ Պրիւսիական, քանզի այն
օրը միայն հեռագրեր է Բ. Դրան
իւր հասնիլ, բայց իւր հեռագրերն
անցեալ չորեքշաբթի օրը Բ. Դրան
հասաւ, պատուիրակաց վերջիշեալ
հեռագրին հասնելէն քիչ վերջը : Կը
կարծուի որ պատուիրակներն յունար
14/26 ին լիազոր իշխանութիւն ստա-
ցան զինադադար կնքելու : անկէ
վերջը Բ. Դրան յունար 12/24 թուով
զրկած հրահանգներն ալ ստացած
ըլլալու են : Զորքաւորութի օրը Վեհ.
Սուլթանին նախագահութեան ներ-
քե. կայսերական պալատը դուռնա-
նալ նախարարաց խորհրդէ մ'եկաւ
երկու բանակի օգնականներ զըր-
կուեցան պատուամատուրի դրօշակով,
որպէս զի պատուիրակաց նորէն հրա-
ման տանին զինադադար կնքելու,
ըստ ծանուցեալ պայմանաց : Վեհ.
Սուլթանին իրաց վիճակին և արիւն-
հեղութեան վերջ տալու փափաքա-
նօք ուղղակի հեռագրի մ'ալ Ռու-
սաց կայսեր զրկեց, ծանուցանելով
թէ զինադադար կնքելու հրահանգ-
ները կրկին զրկուեցան Օսմ. պատ-
ուիրակաց, և հաշտութեան վրայ
չուտով համաձայնիլ կառաւարկէր
կայսեր : Վերջապէս հինգշաբթի օրը
պատուիրակներէն հեռագրի մ'եկաւ
ծանուցանող թէ հաշտութեան նա-
խաշարի պայմաններն երկու կողմէ
ընդունուեան են և միայն ստորագ-
րութիւնը մնացեր է, որ երեկ պիտի
կատարուէր :

Ռուս հրամանատարը մինչև չու-
րեքշաբթի կը շարունակէին իրենց
յառաջխաղացումը : Երեքշաբթի օրը
Ռուս հեռագրով Սինէրի եկան :

Իսկ Զորքու մանող Ռուսաց զորագուն-
դըն անկէ մեկնած կերեւի ուրիշ կողմ
երթալու համար : Բ. Դրան անցեալ
իրիկուն հեռագրու Զորքու ֆէշա-
նի և Կէլիպօլի հետ հաղորդակցե-
ցաւ : Մէհմէտ Ալի փաշան Կ. Պոլ-
սոյ զօրաց հրամանատար անուանե-
ցաւ, և Ահմէտ Մուսթաֆա փաշան
մայրաքաղաքիս ամրութեանց հրամա-
նատարութիւնը կը պահէ, որը Մար-
մարայի մօտ Հատէմ ֆէշէն մինչև Սե-
ծովու եղերքը Տէրքօսի լիճը կը սա-
րածին :

Անգղիական խորհրդարանին վի-
ճաբանութեանց վրայ երկար հեռագ-
րեր կառուելին : Լորտ Տէրպի ծանուց-
եց իւր հրաժարականն ետ առած է,
և ըսաւ թէ հաշտութեան խնդիրը
չկրնար վերջնական որոշում ընդու-
նիլ առանց Եւրոպական դեսպանա-
խորհուրդի մը, որոյ վրայ տէրու-
թեանց ամեն ալ համաձայն են : Ե-
րուսիայի նախարար Սեր Սիմֆօրտ
Նօրթըթ ալ երեսփոխանաց ժողո-
վոյն մէջ նոյն յայտարարութիւններն
ըրաւ, և ըսաւ թէ պատերազմին
եղրակացութիւնն այժմեան դաշնա-
դրութեանց հիմնական փոփոխու-
թիւնը պիտի ըլլայ, բայց պէտք չէ
որ թուրքիս Եւրոպիոյ դիւտանց զոհ-
ւի : Իսկ 6 միլիոն իրացի պատերազ-
մական նոր ծախսոյ պատճառ ջոյց
տուաւ թէ Անգլիա ասով դեսպա-
նախորհրդին մէջ ազդեցութիւն պի-
տի ունենայ : Բայց վիճաբանութիւնն
հինգշաբթի առաւ մնացած էր : Ռու-
սիչ հեռագրի մը կընէ թէ Սեր Սիմ-
ֆօրտ Նօրթըթ ծանուցեր է նաև
թէ չկարծեր որ թուրքիոյ բաժան-
ման համար երեք կայսերաց մէջ
գաղտնի գաշնադրութիւն մը կնքած
ըլլայ : Կիրիսն, ըսաւ, ապստամբու-
լէ, այլ խռովեալ վիճակի մէջ : Լորտ
Տէրպի դեսպանական լիցիակցու-
թեանց շարք մ'ալ ներկայացուց խոր-
հրդարանին, որոյ մէջ նշանակու-
թեան արժանի է յունար 12 թուա-
կանաւ յիշատակագիր մը Լոնտոնի
Ռուսաց դեսպանին ուղղեալ, որով
Անգլիա կը պնդէ թէ նոյն իսկ Կ.
Պոլսոյ առժամեայ դրաւումէն Ռու-
սիա պէտք է խորշի, քանզի այն ժա-
մանակ Անգլիա ալ իւր դրօշակը ա-
զատութիւնը ձեռք կառնու : Կոր-
չաքօք իշխանը պատասխանէր թէ
Ռուսաց կայսրն ինչպէս յառաջ նոյն
պէս և այժմ միտք չունի Կ. Պոլսը
զրաւելու, բայց իւր կատարեալ ու-
ղատութիւնը կը պահէ, ինչպէս որ
ամեն պատերազմով ահաբեկութիւն ի-
րաւունք ունի : Քսան հազար հօգի
Շէֆիլդի մէջ դուռնաբում մ'ըրին կա-
ռավարութեան պահանջած պատե-
րադմի նոր ծախքը պարտաւելու հա-
մար, բայց երկար վիճաբանութիւն
ներէ ետեւ կառավարութեան վրայ
վստահութիւն յայտնեցին :

Լորտ Տէրպի Յունաստանի վրայ
ալ խօսելով ըսաւ թէ քանի մ'ան-
գամ հարցուց հերկեական կառավա-
րութեան թէ արդեօք դեսպանա-
խորհուրդ մը կընդունի : Իսկ Յու-
նաստան պատասխանեց թէ երբ դես-
պախորհուրդը դուռնաբում, այն ժա-
մանակ անոր վրայ կընայ խօսուիլ :
Լորտ Տէրպի կը հետեցնէ թէ Յու-
նաստան ձեռնադաշնութիւն ընելով խո-
հականաբար կը շարժի, բայց ասիկա
իրեն իրաւունք չտար մերձակայ հո-
ղերը բաժնելու :

Օսմանեան խորհրդարանին մէջ
ալ Յունաստանի վրայ խօսք եղաւ :
Ալլահվերաի Յովհաննէս Էֆէնտին ը-
սաւ թէ Յունաստանի ընթացքն ա-
պահովութիւն չ'տար մեզ, և թէ յե-
ղափոխական շարժմանց և թեսաղիոյ
մէջ ապստամբութեան խօսքեր կան,
և հարցուց թէ կառավարութեան
տեղեկութիւններն ի՞նչ են և ի՞նչ
միջոցներ ձեռք առած է : Ալթէնի
մէջ խռովման Օսմանեան դեսպանա-
տան առջև թշնամական ցոյցեր ըրած
էր : Նախագահը պատասխանեց թէ
Մեծ—Եպարքոսին հետ իւր տեսակ-
ցութեան ժամանակ այս խնդրոյ վը-
րայ ալ խօսած էր, բայց կառավա-
րութիւնն Յունաստանի դէպքերուն
վրայ տակաւին ճիշտ տեղեկութիւն
ներ չ'ունի : Իզմիրի երեսփոխան Մի-
նա Էֆէնտին (Յոյն) ըսաւ թէ լրագ-
րաց մէջ կարգացեր է թէ Հայոց
Պատրիարքարանը կամ հասարակու-
թիւնը մեծ տէրութեանց ուղղեալ
յիշատակագիր մը խմբագրեր է, ու-
րով Հայերն անկախութիւն կը պա-
հանջեն եղեր, և հարցուց թէ արդ-
եօք ասո՞րք է այս լուրը : Սուրիոյ ե-
րեսփոխան Խալիլ Ղանէմ Էֆէնտին
պատշաճ չղատեց վիճաբանիլ լրագ-
րաց առած զրոյցներուն վրայ : Ժո-
ղովքն ալ Մինա Էֆէնտին հարցումը
մէկ կողմ լիցիով օրակարգին անցաւ :
Կ. Պոլսոյ երեսփոխան Դադաղեան
Յովհան Էֆէնտին պիտի պատասխանէր
Մինա Էֆէնտինին, բայց օրակարգին
անցնելու որոշում տրուած էր : Այս
միջադէպը դոյնեցաւ, բայց Մինա
Էֆէնտինին հարցումն ստուգիլ բոլոր
վրն անտեղի էր, քանզի մինչդեռ
Ալլահվերաի Յովհաննէս Էֆէնտին
հարցումը դրական լուրերու վրայ
հիմնեալ էր, որոյ մէկ մասը լիցիութ
Հէրըլտի և ուրիշ լրագրաց հրատա-
րակած Ալթէնի նամակներուն և հե-
ռագրաց մէջ կարգացեալ էին, Մի-
նա Էֆէնտինին հարցման նիւթը մէկ
երկու յոյն լրագրիւնքէր զատ ուրիշ
ոչ մէկ լրագրի մէջ տեսնուած է,
այսինքն թէ Հայք տնկախութիւն
խնդրելու համար մեծ տէրութեանց
յիշատակագիր կը խմբագրեն եղեր :
Իսկ մեք այնպիսի յիշատակագրի մը
խմբագրութիւնն առաջին անգամ
Մինա Էֆէնտինին բերնէն կը լսենք,

քանզի ոչ Պատրիարքարանը, ոչ Հա-
յոց աղբն անկէ բնաւ տեղեկութիւն
չ'ունին : Մասիս ծանուցած էր թէ
Հայոց Պատրիարքն Հայաստանի վի-
ճակին բարեօրման համար Բ. Դրան
ներկայանալի ծրագիր մը կը պա-
րաստէ, բայց նկատելով որ կայսե-
րական կառավարութիւնն այս օրերս
ծանր զբաղմունքներ ունի, և չ'կըր-
նար այսպիսի խնդրոյ ժամանակ դո-
հել, յիշեալ ծրագրին խմբագրու-
թիւնն ու ներկայացումն ալ ըստ մեր
տեղեկութեանց պատեհ առթի թող-
ուած է : Հետեւաբար իրաւունք ու-
նինք կարծելու թէ Մինա Էֆէնտինին
հարցումը պարզապէս երևակայական
զրոյցներու վրայ հիմնեալ էր :

Անգլիա և Աւստրիա համիմաստ
ծանուցագիր մը ուղղած են Ռուսիոյ,
որով կը յայտարարեն թէ թուրքիոյ
հետ կնքեալ հաշտութեան պայման-
ները վերջնական չեն կրնար ըլլալ
առանց միւս տէրութեանց հաւա-
նութեան : Աւստրիա կը յայտարարէ
եղեր թէ թուրքիոյ Եւրոպական տե-
րութիւն մնալը կուզէ, և չ'կրնար
անոր անկումը պատճառող որ և է
միջոց մը վտանգացնել :

ՉԻՆԱՐԱՐԱՐ

Կայսերական կառավարութիւնն
հինգշաբթի իրիկուն հետեւեալ պաշ-
տօնական տեղեկութիւն հաղորդեց
մայրաքաղաքի թուրք լրագրաց :

“ Օսմանեան պատուիրակներն այ-
“ սօր կը ծանուցանեն հեռագրով թէ
“ զինադադարի պայմաններն և հաշ-
“ տութեան հիմքը պարունակող նա-
“ խորոյ գաշնադրին այս իրիկուն
“ պիտի ստորագրուի :

“ Կառավարութիւնը կը փութայ
“ այս լուրը ծանուցանել հասարա-
“ կութեան : ”

Ահաւասիկ այս ամենակարեւոր ի-
րողութեան պարագաները :

Բ. Դրան ստացած հեռագրին Սեր-
նապօլոյ երկաթուղոյն տեսուչ Ֆա-
յիգ պէյին յանձնուեալ էր Օսմ. պատ-
ւիրակաց կողմէ : Ֆայիգ պէյ յատուկ
չողեկաւորով մը զայն Չէրքէզ—քէջ
բերեր է Զօրլուէն 24 քիլոմէթր աս-
դին : անկէջ ալ սուրհանդակով Հա-
տէմ քէջ զրկեր է, ուստի ալ եր-
կաթուղիով Կ. Պոլս հասեր է :

Մեծ—Եպարքոսը հեռագրին ըս-
տանալուն պէս կայսերական պալա-
տը դնաց միւս նախարարաց հետ,
և հեռագիրը Վեհ. Սուլթանին ներ-
կայելով, երկար խորհուրդէ մ'եկաւ
Վեհ. Սուլթանին վերջնական հաւա-
նութիւնը հեռագրով Ֆայիգ պէյին
զրկուեցաւ, որ Չէրքէզ—քէջ կը-
պատէր Ռուս սպայից հետ : Հետեւ-
բար կը յուսացուէր որ նոյն գիշերը
Բ. Դրան պատասխանն Ալթէնու-

պոլիս պիտի պիտի հասնէր և ուր-
բաթ առաւօտ ալ հաշտութեան հի-
մերն և զինադադարի պայմանները
պիտի կնքուէին :

Կըսուի թէ բանակցութեանց եր-
կարերուն պատճառն այս է եղեր որ
Նիքոս մեծ դուքսը Ռուսիոյ առա-
ջարկութեանց վրայ տեսցուց'ր է
նաև Կարնոյ և Սիլիսթրիէի գրաւումը :
Գետաձորներ համար ալ
կըսուի թէ Ալբանիոյ պոլիս պիտի
գրաւարի :

Բ. Դուռն երէկ հեռագրով ծա-
նոց զինուորական հրամանատարաց
թէ զինադադար կնքուած է : Մի-
անգամայն հրաման զրկել Բուսիլի
քաղաքային իշխանութեանց որ ժո-
ղովրդոց գաղթումը դադարեցնեն :

Ալբանիոյ պոլիս երէկ եկած
պաշտօնական հեռագիր մը կը ծա-
նոցանէ թէ նախորդ գաշտագիրն ե-
րէկ ժամը 6 ին պիտի ստորագրուէր :
Հետևաբար ստորագրուել գաշտագ-
րին օրինակն այս իրիկուն կ'սպասուի :

Այսօրուան վաղը լրագրիւր խա-
ղաղութեան պայմաններուն վրայ հե-
տեկալ տեղեկութիւնը կը հրատա-
րակէ՝ առանց սակայն ճշգրտութիւնը
կատարելապէս հաստատելու , քանի
որ դեռ պաշտօնական կերպիւ հրա-
տարուած չեն :

1. Վիսիլի , Սիլիսթրիէի , Բուս-
նուգի և Շուսիսի բերդերը պիտի
պարպուին :

2. Ռուսիոյ , Սերպիոյ և Գա-
րաաղի անկախութիւն պիտի արուի
ազատանայ ընդարձակութեամբ :

3. Պալիսիս օրոշեալ տարւոյ մը
վճարելու պայմանաւ ընդարձակ ինք-
նօրինութիւն մը պիտի ունենայ , այ-
սինքն՝ իւր ներքին վարչութեան
մէջ բարձրագոյն անկախ պիտի ըլլայ
առանձին զինուորութեամբ :

4. Հէրէքի և Պոսիսի ալ թիւթե-
կնքօրինութիւն մը պիտի արուի :

5. Կարնի և Կարս Ռուսիոյ պիտի
թողուին :

6. Թուրքիա պատերազմական
ծախք պիտի վճարէ , որոյ գումարն
յետոյ պիտի օրոշուի :

7. Մինչև որ այս առաջադրու-
թեան , Ռուսիա իւր ուղած մէկ
գաւառին մէջ Ռուսիոյ զօրք պի-
տի դնէ :

Գերմանական թակալութ լըրա-
գիրն ալ գրեթէ վերջապէս տեղե-
կութիւնները կուտայ Ռուսիոյ առա-
ջարկած հաշտութեան պայմաննե-
րուն վրայ՝ մէկ երկու տարբերու-
թեամբ , որոց մին է Պալիսիոյ եր-
կու մասի բաժանումն՝ յայնկոյս և
յայնկոյս Պալիսիոյ , որոց իւրա-
քանչիւրին զատ զատ մէկ մէկ իշխան
պիտի դուրսի՝ Վիսի , Սիլիսթրիէի գե-
րիշխանութեան ներքեւ , բայց եր-
կուք մէկ երեսփոխանական ժողով
պիտի ունենան : Երկրորդն է Գա-
նուրեան բերդերուն քանդումն :

Յիշեալ լրագրիւր կը ծանուցանէ
նաև թէ Ռուսիա Գարս անկիւն նե-
ղուցին մի միայն Ռուսիոյ պատերազ-
մական նաւուց բաղադրել պիտի պա-
հանջէ , բայց այս պահանջումը բա-
րեփոխուած կերպի 'ի նպատակ ման
տէրութեանց նաւերուն :

Այս անհամաձայն տեղեկութեանց
պատճառաւ մտքերուն մէջ տիրած
անտուգանքութիւնն անշուշտ մէկ եր-
կու օրէն պիտի փարստի՝ երբոր
հաշտութեան հիմնական պայմանները
պաշտօնապէս հրատարակին :

Պերլինէն Անգլիոյ Ծէյլի-Նիւզ
լրագրին ուղղեալ հեռագիր մը՝ Ռու-
սիոյ առաջարկած հաշտութեան պայ-

մաններուն վրայ քանի մը տեղեկու-
թիւններ տալէ ետեւ կը յորէ :

«Իսկ Հայաստանի մասին Ռուսիա
բնաւ արամադրութիւն չունի որ և
է միջամտութիւն ընդունելու ուրիշ
տէրութեանց կողմէ : Յայտնի է որ
այդ նահանգին մեծ կալ մէկ մասն ի-
րեն սեփականելու գիտատրութիւն
ունի 'ի հաշիւ պատերազմական ծա-
խուց , և այս մասին Գերմանիոյ ա-
ջակցութեան վրայ ալ վստահութիւն
ունի » :

Վաղը լրագրիւր կը ծանուցանէ
թէ Նիքոս մեծ դուքսին տուած ար-
տօնութեանը վրայ՝ երէկ ասիկոյ եր-
կաթուղիով խել մը գիծ ու նիւթեր
զրկուեցան Ալբանիոյ պոլիսէն մինչև
Չէրքէզ—քէջ կարուած հեռագրա-
գիծերը վերահաստատուելու համար :

Բ. Դուռն երէկ հեռագիր զար-
կու Օսմ. պատուիրակաց , խնդրելու
Նիքոս Մեծ դուքսին , որ հրաման
զրկէ Ասիոյ Ռուսիոյ բանակին , ինչ-
պէս նաև Բուսիսիոյ , Սերպիոյ և Գարա-
աղի բանակաց , որ պարսպ տեղը
արինհանգութիւն չընելով թշնամու-
թիւնը դադարեցնել :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոստրա 31 յունի .
Անգլիոյ պահքան իւր դեղին 20/0
իջուց :

Փարիզ 1 փետր .
Ռուսիա կընդունի տէրութեանց ժո-
ղով (քոնիս) գումարներու առաջարկու-
թիւնը , և հաւանական է որ Վիսիսի
գումարի :

Օսմ. ֆոն .	9 4/16
Փոլս .	1863 9 1/4
»	1869 8 3/4
»	1871 34
»	1872 13 1/2
»	1873 8 14/16
» Երկրորդ .	34
Անգլ. ֆոն .	95 9/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի իրիկուն մայրաքա-
ղաքիս Լոստրա միկիթներուն մէջ յայ-
տարարութիւն մը կարգացուեցաւ ,
որով կառավարութիւնը կը յորդորէ
իւրաժողովուրդներն՝ որ ամեն տեղ
պաշտած կերպիւ վարուին , և ներ-
կայ տաքնապալից օրերուն մէջ սըր-
ճարանները գումարուելով նարախա-
ղաք և ուրիշ զբօսանայ զբաղել
դադարին :

Շիրքէթի խոյրիէի և Մահաու-
սիէի շաքենաւոց ընկերութիւններուն
հրաման եղաւ որ Բուսիլիէն եկող
գաղթականներէն կէս նաւորջէք
առնուն :

Բ. Դրան օրոշմամբ թուրքիոյ մէջ
չնեւած սեկը (սաթիթիս) տէրու-
թեան մէկ նաւահանգիստէն միւսը
տարուած ժամանակ մաքսի և դրոշ-
մի տուրքերէ ազատ պիտի ըլլայ :

Շքօտրայէն հետեկալ կը գրեն
մայրաքաղաքիս Բուսիլիէի տ'Օրիան
լրագրին :

«Կաղանգին օրը՝ յունագաւան
եպիսկոպոս մը պատարագ ըրաւ Ան-
թիվարիի միկիթին մէջ՝ 'ի ներկայու-
թեան Գարաաղի իշխանին , Մըզլի-
թին աշտարակը (միւսարէն) փոխել ,
և ժամացուցին զանգակն՝ որ վէնէ-
տիկցիներէն մնացած է՝ նոր եկեղե-
ցին տարուեցաւ՝ պատարագի և դո-
հարանական երգերուն հանգիստա-
րութիւնն աւելցնելու համար :

«Քանի մը Ռուս սպայք ալ ներ-
կայ էին հանգիսին :

«Միկիթին տնունը Ս. Գեորգիայ
եկեղեցիի դրուեցաւ » :

ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՄԻՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Նոյն 17 յունի (Երեւանի)

Իրիկի երեսփոխան Մինա Էֆէնի
սաւ թէ լրագրերէն կիմանայ թէ Հա-
յոց Պատրիարքարանը կամ հասարակու-
թիւնն Եւրոպական տէրութեանց ուղ-
ղեալ յիշատակադիր մը խորագրեր է , ու
րով Հայքիւրենց անկախութիւնը կը խնդ-
րեն : Սառիք է այս լուրը :

Սուրիոյ երեսփոխան Խալիլ Դանէմէ-
ֆէնի կարծիք յայտնեց թէ Մինա է-
ֆէնիի ներկայած այս հարցումը չիւր-
նար և պէտք չէ վիճարանութեան նիւթ
ըլլալ , որովհետեւ լրագրաց խօսքերու վը-
րայ հիմնեալ է , որը չափ անգամ անհիմն
լուրեր կը հրատարակեն : Ասիկոյ դատ
իւր կարծիքն այս է թէ երեսփոխանը ի-
րաւունք չունին այսպիսի հարցումներ ուղ-
ղելու առ նախագահն : Այդ տեսակ խն-
դիրները պէտք է զրոյ ներկային :

Գաղապեան Յակոբ Էֆէնիին խօսք ու-
ղեց Մինա Էֆէնիին որստատանելու հա-
մար , բայց ժողովը օրակարգին անցնի
որովհետեւ նախագահը խօսք չուրաւ անոր :

Կ. Պոլսոյ երեսփոխան Սալաւան Ա-
լիքան Էֆէնիին խօսք տուելով՝ ըսաւ
թէ Կ. Պոլսոյ մէջ գտնուած արմատաց
և քաղաքի պարէնաւորման վրայ կառա-
վարութեան խնդրուած տեղեկութիւն
ներէ խնայանք թէ Կ. Պոլսի մէկ տար-
ւան սպառ ունի : Այս հարցին ասիկոյ
15 օր առաջ եղած էր մայրաքաղաքիս
սովորական ժողովրդեան թուոյն վրայ :
Արդ՝ այս հիմն այսօր չափ փոխուած է
Բուսիլիէի գաղթականաց մայրաքաղաքիս
լրուելուն պատճառաւ : Հիւսիսարք ըս-
տիպողական միջոցներ ձեռք առնուլ հարկ
է : Այնպիսով որ Վաւանայի մէջ ցորենի
մեծ միկերը կայ , մէկ միկին քիչէն ա-
ւելի , որոյ կէսը կառավարութեան սե-
փականութիւնն է , միւս կէսն ալ վա-
ճառականաց : Կառավարութիւնը պէտք
է Կ. Պոլսի բերել տայ այդ ցորենին դո-
նէ կէսը : Այդպիսով մէկ և չընկաները
բազում ցորեն կար : Ժամանակին այդ
ցորեններն ապահով տեղեր փոխադրելու
համար եղած բոլոր ջանքերն ապարդիւն
եղան կառավարութեան ձեռք առած ար-
դեւական միջոցներուն պատճառաւ , հե-
տեւարար ցորեններուն մեծ մասը՝ Ռուսաց
ձեռքն ինկան : Նոյն եղաւ Օսման-Պա-
ղաքի մէջ միկերեալ ցորեններուն համար
ալ :

Ալիքան Էֆէնիին ժողովին լուրջ ու-
շաղորդութիւնն այս կարեւոր խնդրոյս վրայ
հրաւիրելով՝ խօսքը վերջացուց :

Ժողովը ջերմ վիճարանութեան մ'եղաւ
միաձայնութեամբ որոշեց վերստին Բ.
Դրան գրել այս խնդրոյս վրայ :

Նոյն 18 յունի (Երեւանի)

Նախնայի երեսփոխան Մէհմեդ Ալի
պէյ ըսաւ թէ Վաղը լրագրիւր մեր վի-
ճարանութիւնները խնդրելու բաւա-
կան չհամարելով՝ կիծ քննադատութիւն
մ'ալ հրատարակած է ժողովին զէմ : Բ.
Դրան տպագրական դիւանին անօրին
Մահաւ պէյ՝ աշխարհ իրաւացի դուր է
այն քննադատութիւնն որ գոհութեան
նամակ մ'ուղղել է Վաղը լրագրին , նամակ մը ,
զոր յիշեալ թիւթին հրատարակել է հան-
դերձ մեկնարանութեամբ : Մահաւ պէյ
կառավարութեան բարձրատիւման պղծ-
տեստար մ'ըլլալով՝ Վաղը լրագրին ուղղած
գոհութեան նամակը պարսաւ մ'է ժողո-
վոյս : Արդեւ կառավարութիւնն ապա-
լին երեսփոխանութեան սպարաւ տա-
լու համար այդ միջոցն ընտրած է , կը
խնդրեն որ Մահաւ պէյն ամբաստանու-
թեան ենթարկուի :

Ալաշկերտի Յօհաննէս Էֆէնի . —
Մեք չենք կրնար և պէտք չէ երբեք ար-
դեւունք լրագրաց քննադատութիւնները :
Մեր նիւստերն հրապարակային են , և
երբոր մեր վիճարանութիւններուն ներ-
կայ դանուելու իրաւունք կուտանք ա-
նոնց , մեր խօսքերն ու գործերը քննա-
դատուելու իրաւունք ալ տուած կըլլանք :

Գաղապեան Յակոբ Էֆէնիին մեծ
ճարտարութեամբ և հանճարով պաշտ-
պանեց մամուլ պատուութիւնը : Մեք չենք

կրնար երբեք լրագրաց քննադատութիւն-
ներն արդեւուլ : Ընդհակառակն՝ պէտք է
փնտռենք և քաջալերենք . վստայի դա-
ղափարաց բաղաւմէն լոյս կը ցայտէ :
Մեք մեր փայլեալ խօսքերու ազատու-
թեան նախանձախնդիր ենք , իսկ լրագրաց
համար արդեւուլ կուգենք զայն : Ես եր-
բեք չեմ համաձայնիր իմ պաշտօնակից-
ներէս ունեց տեսութեան եղանակին :
Մահաւ պէյն ամբաստանութեան են-
թարկել կուգուի իւր անձնական կարծիքն
յայտնած ըլլալուն համար : Ես այդ կար-
ծիքէն չեմ : Շատ չափ լրագրութիւն
կրնայ ուղղուի իրմէ :

Նէնիէ Նիւրի-Ջաւան . — Օտար լրագ-
րերը չկարգաւոր՝ չեմ կրնար դիտարու-
թիւն մ'ընել անոնց վրայ : Իսկ Թուրք
լրագրաց խօսքը չեմ ընկեր : Անոնց ոչ մի
կարգաւոր բան չէ : Ափեղցիկեղութեան
զատ ուրիշ բան չեն գրեր , և սուտէ
զատ ուրիշ բան չեն հրատարակել : Շատ
կը սխալի կարծողը թէ այդ լրագրերը
կարգաւոր կրնայ կրթութիւն և ճամբորդ-
ութիւն խմանալ : Ահա այս պատճառաւ
զանոնք կարգաւոր դադարած եմ , և բնաւ
կարեւորութիւն չեմ տար անոնց . իսկ
Մահաւ պէյի ընթացքն անարդարանա-
լի է :

Գաղապեան Յակոբ Էֆէնի . — Տեա՛րք ,
մեք լրագրութեան կարեւորութիւնն ու
օգուտները չհասկնալու երեւոյթ մ'ունինք :
Մահաւ պէյն ալիարհի դատարարին եղած
է և սխալ լինի : Երբեք չեմ ընդունիր որ
մեք անսխալ եղած ըլլանք և քննադա-
տութեան տոյժ չկրնանք տալ : Կրնանք
առանց ուղղուլ՝ սխալներ պատուութիւն-
ներ գործել : Ահա քննադատութիւնը
զանոնք յերեւան պիտի հանէ և մեք խա-
ղապեան պիտի քաղենք անիկ : Պէտք չէ ,
տեա՛րք , մամուլ պատուութեան արդեւ
դեւել : Ընդհակառակն՝ պէտք է ջանանք
որ այդ պատուութիւնն հնար եղածին
չափ ընդարձակի :

Նէնիէ Նիւրի-Ջաւան . — Յակոբ Էֆէն-
իին կերել թէ իմ խօսքերս չհասկցաւ :
Ես մամուլ պատուութեան դէմ չխօսեցայ :
Ընդհակառակն՝ ես լրագրերն ազատ թո-
ղուցի ամեն ուղղանին գրելու , յորովհետեւ
ըսի թէ պէտք չէ բնաւ կարեւորութիւն
ընծայենք : Իսկ մեր սխալներուն ու պա-
կատութեանց լրագրերին ուղղուելուն դա-
լով , չեմ ընդունիր զայդ : Ընդունելով
իսկ թէ այս ժողովը կրնայ սխալներ դու-
ծել , կրնայ նաև ինքնին նմարելով դար-
մանել զանոնք : Միկէ մեր որոշումները
վերաքննող աւագաց ժողով մը չունինք :

Նախագահ . — Խնդիրն ըստ բաւա-
կանի լուսաւորուած կը թուի ինձ : Այս
երկար վիճարանութեան մէջ առաջարկու-
թիւն մը կը տեսնեմ լրագրական դիւա-
նին անօրին Մահաւ պէյին դէմ : Ժողովը
այդ առաջարկը նկատողութեան առնու-
եւ որոշում մ'ընելու համար պէտք է որ
Մէհմեդ Ալի պէյ իւր առաջարկը զրոյ
ներկայէ :

Ժողովը հաւանութիւն տուաւ , և մի-
ջադէպը փակեցաւ :

Նախնայի երեսփոխան Տալիֆէն Էֆէն-
իին անուստալ խափան ատենադատութիւն
մ'ընելով եղբայրացուց թէ տէրութեան
պաշտօնատարներն առաւ թողալ պէտք
է ստանան , որպէս զի զօգաբաւ և անհա-
ւատարիմ ըլլալէ դադարին :

Կարնոյ երեսփոխան Կիրակոս Էֆէն-
իին՝ պաշտօնատարաց բարոյականին
բարեբան համար Տալիֆէն Էֆէնիին
առաջարկած միջոցին աղուութիւնը ժըլա-
տեց՝ յայտարարելով թէ ինք 100,000
դրու թողալ ստացող անարկելու պաշ-
տօնատարներ տեսած է , ինչպէս նաև
500 դրու թողալ ստացող իրաւ պարկելու
պաշտօնեայները Անպարկելութեան տի-
ար չկրնար բռնիլ առատ թողալ տու-
լով Լաւաղայն միջոցը պաշտօնատարաց
ընտրութեան մեծ ուղադրութիւն նուի-
րեն է :

Նախնայի երեսփոխան Ասիլի պէյ՝
երկար ատենադատութեամբ մը պաշտո-
նատարաց պատրաստութեան և ընտրու-
թեան հարկին վրայ պնդելով՝ արդարա-
խօս , անստիպել և հոռու անձերէ յանձ-
նաժողով մը կազմելու առաջարկեց , և Ե-
թէ այդ հանգամանքն ունեցող անձինք
Թուրքիոյ մէջ գտնուի զժողովին ըլլայ ,

Ի ՏԵԼԵՐԱՆԻ ԲԱՍԻՍ ԼԻՆԳՐՈՑ
ՉԱԼԱԹԱ ՆՕՐՕ ԽԱՆ